ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

18-ը դեկտեմբերի 2019թ. N 39

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Արագածոտն համայնքի ավագանին որոշեց հաստատել 2019թ.-ի դեկտեմբերի 18-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Արագածոտն համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Արագածոտն համայնքի ավագանու 05 դեկտեմբերի 2019թ.-ի թիվ 40,41,42,43,44 որոշումները անվավեր ճանաչելու մասին:
3. Արագածոտն համայնքի 2020թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
4. Արագածոտն համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. Արագածոտն համայնքի տարեկան բյուջեն հաստատելու մասին:
6. Արագածոտն համայնքի սեփականություն հանդիսացող գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ – 0

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

18-ը դեկտեմբերի 2019թ. N 45

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.12.2019ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ ԹԻՎ 40,41,42,43,44 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 2019թ. թիվ 01/1/06142-2019 գրությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արագածոտն համայնքի 18.12.2019 թվականի ավագանու նիստի թիվ 45 որոշումով անվավեր ճանաչել նախկին 40,41,42,43,44 որոշումները:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ – 0

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

18-ը դեկտեմբերի 2019թ. N 46

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով Արագածոտն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտն մարզի Արագածոտն համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ – 0

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն
համայնքի ավագանու 2019թ.
դեկտեմբերի 18-ի N 46 որոշման

# ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

**3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ.

**4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ** տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

18-ը դեկտեմբերի 2019թ. N 47

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով Արագածոտն համայնքի ավագանին`

ՈՐՈՇՈՒՄ Է`

1. Հաստատել Արագածոտնի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ – 0

Գ.Զարոյան

Լ.Կիրակոսյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար` Մ.Ղազարյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն
համայնքի ավագանու
2019 թ. դեկտեմբերի 18-ի N 47 որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 11
Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 8

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ | |
|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 297270 | 297270 |
| Տեղակալ | 1 | 146680 | 146680 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 170228 | 170228 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 151346 | 151346 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 151346 | 151346 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 151346 | 151346 |
| Սպասարկող անձնակազմ | | | |
| Պայմանագրային ծառայող | 0.5 | 72752 | 36376 |
| Մշակույթի տան պահակ | 0.25 | 176000 | 44000 |
| Կոմունալ ծառայող | 0.5 | 148000 | 74000 |
| Հավաքարար | 0.25 | 176000 | 44000 |
| Գեղմասվար | 0.25 | 176000 | 44000 |
| Գրադարանավար | 0.25 | 176000 | 44000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 8 | | 1354592 |

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Արագածոտն համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

18-ը դեկտեմբերի 2019թ. N 48

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020թ. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով Արագածոտն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Արագածոտն համայնքի 2020թ. բյուջեն ՝ համաձայն կից հավելված 1-ով:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ – 0

Գ.Զաքոյան

Լ.Կիրակոսյան

Ա.Մկրտչյան

Արագածոտն համայնքի ղեկավար՝ Մ.Ղազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Արագածոտն, (093) 809081, aragatsotn.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 49

## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով համայնքի ավագանին ***որոշում է՝***

1.Հաստատել Արագածոտն համայնքի սեփականություն հանդիսացող գույքագրման փաստաթղթերը համաձայն հավելվածի:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԶԱՐՈՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄԵԼՍԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ**